

ՀԱՅ ԳՐԻ և ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՀԻՄՆԱԴԻՐԸ*

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հայկական ԽՍՀ ԳԱ Պրեզիդենտ, ակադեմիկոս

Սիրելի ընկերներ, թանկագին հյուրեր.

Այսօր հայ ժողովուրդը տոնում է իր մեծ զավակի՝ հայերեն ուսանալու և ստեղծող, հայոց մատենագրության, ուսման ու դպրոցի հիմնադիր, մեծ գիտնական ու լուսավորիչ անմահ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հորեղյանը հայ ժողովրդի հետ միասին նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները: Եվ դա հասկանալի է՝ մեր երկրում մի ժողովրդի տոնը տոն է նաև բոլոր եղբայրական ժողովուրդների համար: Պատահական չէ, որ հենց այսօր Մոսկվայի՝ մեր հայրենիքի պանծալի մայրաքաղաքի հասարակայնությունը լայնորեն նշում է Մաշտոցի 1600-ամյակը: Այսօր մեր տոնական ուրախությունը բաժանելու համար Հայաստան են ժամանել և այս նիստին ներկա են բոլոր եղբայրական հանրապետությունների ներկայացուցիչները:

Մեսրոպ Մաշտոցի հորեղյանի նշումը դա Կոմունիստական պարտիայի և կառավարության արժանի գնահատումն է անցյալի մշակութային ժառանգության և ջերմ հոգատարությունը՝ սովետական բոլոր ժողովուրդների ձեռով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի նկատմամբ:

Մաշտոցի կատարած գործը այն մեծագույն ծառայությունն է, որ կարող էր մասուցել հեռավոր այն ժամանակներում մշակույթի որևէ գործիչ իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին: Մեր ժողովուրդը անհուն երախտագիտությամբ, սիրով ու հարգանքով է լցված Մաշտոցի նկատմամբ: Անսպառ ու հարատև մի զգացմունք է դա, որը եղել է, կա ու միշտ կլինի, քանի՜ կա ու կլինի ինքը՝ հայ ժողովուրդը:

Ո՞րն է այդ մեծ երախտագիտության, սիրտ ու հարգանքի հիմքը:

Այդ առումով թույլ տվեք սկզբից շատ համոռոտակի կանգ առնել՝ գրի և լեզվի հասարակական ֆունկցիայի վրա:

Հասարակության կյանքում հսկայական դեր է խաղում ինֆորմացիայի փոխանակությունը: Նրա զարգացմանը զուգահեռ, աճող տեմպերով ավելանում է փոխանակվող ինֆորմացիայի (տեղեկությունների) ծավալը: Դրան համապատասխան զարգանում են և վերջինիս միջոցները, հանդես են գալիս տեղե-

* Զեկույում, կտրղացված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված ուսպուր լիկական հանդիսավոր նիստում, 1962 թ. մայիսի 27-ին:

կոլեկտիվների հավաքման, հաղորդման, պահպանման, վերամշակման և տարածման նոր և ավելի կատարյալ ձևեր:

Հնագույն ժամանակներում իբրև ինֆորմացիայի փոխանակման միջոցներ ծառայել են մենջախոսությունը (պանտոմիմիկա), դիմախոսությունը (միմիկա) և առանձին հնչյունները: Այնուհետև առաջացել են լեզուները, սկզբում շատ պարզունակ իրենց ձևերով, ապա՝ զարգացած, հարուստ բառապաշարով և քերականական բարդ կանոններով օժտված:

Առաջա զարգացումը կապված է եղել մտքերի և խոսքերի զրանցման հետ. րստ որում, սկզբնական փուլում գերիշխել է պատկերազրերի և զաղափարազրերի (հիերոգլիֆների) գործածությունը:

Ավելի ուշ մշակվել են խոսքի զրանցման ֆոնետիկ, հնչյունային սիստեմներ, որոնք մինչև այժմ օգտագործվում են աշխարհի մեծ մասում:

Գաղափարազրերի յուրաքանչյուր համակարգի մշակումը փաստորեն նշանակում էր մի պայմանական լեզվի ստեղծում: Խոսքի զրանցումը գաղափարազրերով համարժեք է օտար լեզվից կատարվող թարգմանության, քանի որ ամեն մի բառին պետք է համապատասխանի մի որոշ գաղափարազիր: Որոշ լեզուներում գաղափարազրերի թիվը հասնում է տասնյակ հազարների: Տարբեր լեզուներով և բարբառներով խոսող մարդիկ կարող են օգտագործել գաղափարազրերի միևնույն համակարգը, ճիշտ այնպես, ինչպես որ երկու տարբեր լեզուներով արտասանված խոսքերը կարող են թարգմանվել մի երրորդ լեզվի:

Յուրաքանչյուր լեզու գաղափարների ու պատկերացումների կրճատագրման (կոդացման) մի համակարգ է, որ կրճատագիրը (կոդը) արտահայտվում է բազմաթիվ բառերով, որոնք բաղկացած են համեմատաբար փոքրաթիվ հնչյուններից:

Գաղափարների և պատկերացումների կրճատագրման կամ կոդացման մի նոր համակարգ են զրանշանները, որոնք արտահայտվում են.

ա) գաղափարների և բառերի անմիջական կրճատագրումով, և կամ

բ) հնչյուններին համապատասխանող զրերի կամ տառերի օգտագործումով: Այստեղ զիրը հանդես է գալիս որպես կրկնակի կոդացման երկրորդ աստիճան:

Տառերից օգտվելու եղանակը շատ ավելի դյուրամատչելի է, քան իսկ պատճառով էլ այն այսօր կիրառվում է ազգերի մեծամասնության կողմից:

Տառերի համակարգը փաստորեն թույլ է տալիս զրանցել խոսքի հնչյունները և իր էությունը շատ մոտ է ձայնագրությանը:

Սակայն տարբեր լեզուներ ունեն տարբեր հնչյունական համակարգություն, որի հետևանքով նրանք չեն կարող օգտագործել միևնույն տառերը: Այս տեսակետից տառերը (զրերը), որպես ձայնագրման միջոց, տարբերվում են, օրինակ, մագնիտաֆոնից, որը կարող է զրանցել ամեն տեսակի հնչյուններ, բոլոր լեզուներով ասված խոսքերը:

Ուսուցման համար լինելով շատ ավելի դյուրամատչելի, տառերը թույլ են տալիս թղթի կամ մագաղաթի միևնույն մակերեսում հաղորդել համարյա նույն ծավալի ինֆորմացիա, որքան և գաղափարազրերը (հիերոգլիֆները): Սակայն գաղափարազրերի ճանաչման ընթացքում մարդու հիշողությունը ծանրաբեռնվում է հսկայական ավելորդ տեղեկություններով, որոնց յուրացումը պահանջում է բավական երկար ժամանակ:

Հասարակության կողմից ստեղծված հոգևոր մշակույթը պահպանելու, այն զարգացնելու, օգտագործելու և սերնդե-սերունդ փոխանցելու համար անհրաժեշտ են ինֆորմացիայի պահպանման միջոցներ:

Սկզբնական շրջանում մարզն օգտվել է այնպիսի մի միջոցից, ինչպիսին է հիշողությունը, որ նրան տվել է բնությունը: Այս կերպ են հասել մեզ մեր ժողովրդի հանձարեղ էպոսը՝ «Սասունցի Դավիթը», մեր գուսանական-ժողովրդական անկրկնելի «հայրենները» և ժողովրդական բանահյուսության բաղմամբիվ այլ ստեղծագործություններ:

Սակայն հասկանալի է, որ ինֆորմացիայի պահպանման այս ձևը՝ մարդկային հիշողությունը, ունի սահմանափակ ծավալ: Մինչդեռ նշանագրերը կամ պրերը հնարավորություն ունեն սերնդից-սերունդ և դարից-դար ավանդել շատ ավելի մեծ ծավալի մշակութային ժառանգություն: Մենք պարծենում ենք մեր Մատենադարանով, որը վկայում է, թե ինչպիսի հմտությամբ ու եռանդով է հայ ժողովուրդը օգտագործել ինֆորմացիայի պահպանման ու հաղորդման տվյալ միջոցը իր մշակույթը զարգացնելու և հետագա սերունդներին հաղորդելու համար:

Ե այց գրերը միայն մշակույթի զարգացման ու մշակութային կոթողների պահպանման ու ժառանգման գործին չէ որ ծառայում են: Նրանք լայնորեն կիրառվել են նաև ժողովուրդների գործնական, տնտեսական և քաղաքական կյանքում՝ ինֆորմացիայի հաղորդման, պահպանման ու տարածման համար:

Յուրաքանչյուր քիչ թե շատ կազմակերպված պետության մեջ հաղորդումների, կարգադրությունների և հաշվետվությունների ծավալը հսկայական չափերի է հասնում: Այս պայմաններում ինֆորմացիայի փոխանակման համար միջոցներ ունենալը դառնում է պետական անհրաժեշտություն:

Պետք է նշել, որ եթե մի կողմից ժողովրդի պետականության և մշակույթի զարգացումը առավել հրատապ է դարձնում ինֆորմացիայի միջոցների ստեղծման և զարգացման անհրաժեշտությունը, ապա պատմությունը ցույց է տալիս, որ այդ պահանջների բավարարումը իր հերթին հզորագույն խթան է հանդիսանում ժողովրդի բնահանուր և մասնավորապես հոգևոր մշակույթի զարգացման համար:

Հայ ժողովրդի կազմավորումը հանգեցրեց հայկական պետության ստեղծմանը: Դարերի ընթացքում զարգացավ մեր ժողովրդի պետականությունը և նրա մշակույթը: Եվ եթե հայերին նախորդող ուրարտացիները զգացել են գրի պահանջը և ունեցել են սեպագրեր, ապա հայոց պետությունը ներկայացնելով իրենից հասարակության զարգացման ավելի բարձր աստիճան, բնական է, որ պետք է զգար ինֆորմացիայի փոխանակման կատարելագործված միջոցների ավելի խիստ պահանջ:

Մեզանից տասնվեց դար առաջ Հայաստանում ստեղծվեցին պայմաններ, երբ հրամայական պահանջ դարձավ սեփական գրերի՝ որպես ինֆորմացիայի հաղորդման կատարելագործված միջոցի, ստեղծումը:

Ավելին՝ այդ պահանջի բավարարման հարցը հայ ժողովրդի համար դարձավ կենաց ու մահու խնդիր:

Այսպիսի իրադրության մեջ էր ահա, որ մեր թվականության V դարի արշալույսին հանդես եկավ Մեսրոպ Մաշտոցը՝ հայերեն նշանագրերի իր հրաշագործ գյուտով:

Հայ գրերի գյուտը կատարվեց պատմական և քաղաքական բարդ իրադրություն պայմաններում:

Ի սկզբանե անտի հայ ժողովրդի օրրանն է եղել Հայկական լեռնաշխարհը: Այստեղ են ձևավորվել և՛ հայ լեզուն, և՛ հայ բանահյուսությունը՝ ղեկնա հայկական գրերի ստեղծումից շատ դարեր առաջ, տոհմատիրական հարաբերությունների շրջանում:

Հայ հնագույն բանահյուսությունից մեզ հասել են մի շարք բեկորներ՝ «Հայկի ու Բելի», «Արամի», «Արա Գեղեցիկի ու Նամիրամի», «Տորք Անդեղի» և այլ առասպելները, որոնք ժամանակին մշակվել են հայերեն: Մեր ժողովուրդը վառ երևակայությամբ նրանց մեջ արտացոլել է իր դարավոր պայքարի առանձին դրվագները. նրանք խոսում են հայ ժողովրդի համախմբման, ինքնուրույն գոյության, ազատ ու անկաշկանդ կյանքով ապրելու նրա բուռն ձրգտման մասին:

«Հայկի ու Բելի» առասպելում ժողովուրդն իր նախահորը պատկերել է որպես իր տոհմը համախմբող ղեկավարի, որպես բռնության դեմ բմբոստացողի, ամեն մի ստրկություն մերժողի—որպես ազատությունը պաշտպանող մի ղյուցազնի: Հայկը՝ կովի դուրս գալով բռնակալ Բելի դեմ, նրան ոչնչացնում է ճակատամարտում, ապա՝ շենացնում, հարստացնում է իր երկիրը և ի հիշատակ գալիք սերունդներին՝ Բելի դիակը ղետեղում է բարձրաբերձ լեռան վրա, որպեսզի իր հետնորդները հիշեն, թե ինչպես պետք է պայքարել բռնության դեմ:

Հետագայում Հայաստանը շարունակեց իր պայքարը պարթևական և հունական պետությունների դեմ. նա դարձավ պետական, ռազմական, մշակութային հարուստ ավանդներ ունեցող ուժեղ միավորում: Զարգացան նաև նրա դրականությունը, բանահյուսությունը և արվեստները:

Այդ շրջանից մեզ հասել են «Վահագնի ծնունդը» գովերգող հուշակավոր վիպերգը և ուրիշ գոգթան երգեր, ինչպես և «Արտաշեսի ու Սաթենիկի» վեպը: Այդ շրջանում է ստեղծվել Հայաստանի մեհենական պատմությունը, որն, բաց հնօրյա ավանդության, գրել է Արտաշես II թագավորի որդի Մաթանը, Անի ամրոցի Արամազդի մեհյանի քրմապետը:

Մովսես Խորենացին պատմում է, որ հնում Եղեսիայից Անիի մեհյանն է եկել ասորի պատմաբան Բարդաժանը՝ մեհենական այդ պատմությունը թարգմանելու համար:

«Մտավ նա Անի ամրոցը,—գրում է Խորենացին,—կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը. իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը և բոլորը փոխադրեց ասորի լեզվի և ապա՝ հունարենի»:

Այս փաստը վկայում է, որ Խորենացու հիշատակած մեհենական պատմությունը գրվել է ոչ ասորերեն և ոչ էլ հունարեն, այլ հավանաբար՝ հայերեն:

Հայտնի է նաև, որ Պյուտարքոսը իր «Զուգակշիռ» վերնագրով աշխատության մեջ հիշատակում է, որ առաջին դարում մ. թ. ա. Տիգրան II-ի որդի Արտավազդը «Ողբերգություն ևս բերթեալ ունի, և ճառս, և արձանագրեալ պատմությունս, յորոց կեսը կան մինչև ցայս»—այսինքն՝ Արտավազդից 230 տարի հետո:

Այսպիսով, անկասկած է Հայաստանում գրականության, այն էլ բավական զարգացած գրականության, առկայությունը դեռևս անտիկ շրջանում:

Սակայն ի՞նչ դրեր են գործածվել այդ գրականության գրառման համար:

Ոմանք ենթադրել են, թե հայերը հին շրջանում օգտվել են արամեական, սեմական, հրեական նշանագրերից: Ուրիշները կարծում են, որ հելլենիզմի տարածման շրջանում օգտագործվել են հունական նշանագրերը:

V դարի հայ պատմագիրների ակնարկներից կարելի է հետևել նաև այն, որ այդ հին շրջանում հայերը փորձել են ստեղծել՝ որպես ինֆորմացիայի հաղորդման ինքնուրույն միջոց, իրենց գրերը, որոնք հետագայում ոչնչացվել են:

«Վաղնջուց գտեալ շարագիր տառեր» է անվանում խորենացին այդ հայկական տառերը: Դրանք, Գորյունի ասելով, «մահացած» և V դարում նորից հարություն առած «գրեր էին», որոնք ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ գտնվելու պատճառով, պայմանականորեն կոչվել են «Դանիելյան» գրեր:

Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումն ու ամրապնդումը Հայաստանում II—IV դարերում համընկավ քրիստոնեության տարածման ու հաստատման հետ: Վերջինս հրի ու սրի միջոցով աշխատեց ոչնչացնել հեթանոսության շրջանի հոգևոր մշակույթի կոթողները, այդ թվում, ըստ երևույթին, նաև հայկական հնագույն գրերը:

Ավելի ուշ, ֆեոդալական հարաբերությունների հաղթանակով, IV—V դարերում Հայաստանում առաջացան հասարակական կյանքի նոր և խոր հակասություններ, որոնք խարխլեցին հայկական պետությունը, կրճակունիների հարստությունը, ճգնաժամային պայմաններ ստեղծեցին երկրի ինչպես տնտեսական, հասարակական և քաղաքական, այնպես էլ մշակութային կյանքում:

Առաջանում էր ռամիկների, շինականների ստվար դասակարգը, որի հետ, ինչպես նաև ստրուկների մնացորդների հետ, անհաշտ հակամարտության մեջ էին տիրապետող ֆեոդալները: Առանձին նախարարություններ երևան էին բերում կենտրոնախույս ձգտումներ, դիրքորոշվելով դեպի հարևան հզոր պետությունները, գծովում էին հայկական կենտրոնական իշխանության հետ: Ֆեոդալների և թագավորական իշխանության այս հակամարտությունը ավելի ևս սրվում էր ներքին ինքնավարության ու տնտեսության մասնատվածության շնորհիվ:

Մասնավորապես IV դարի կեսին՝ եկեղեցական կալվածքներն ընդարձակվելու հողի վրա, ուժեղանում էր եկեղեցական, կաթողիկոսական իշխանությունը, որի հետևանքով հակամարտություն ստեղծվեց քաղաքացիական և եկեղեցական իշխանությունների միջև: Այս բարդ ներքին հակասությունների հետևանքով թուլանում էր երկրի, ժողովրդի և պետության միասնական կապը. թուլանում էր նրա դիմադրական ուժը արտաքին թշնամիների հանդեպ. նպաստավոր հող էր ստեղծվում հռոմեական և սլաւոնաց պետությունների ներխուժման համար, Հայաստանի ներքին գործերին միջամտելու, երկրի ուժերը պառակտելու համար:

Այդ է ակնարկում V դարի պատմիչ Փավստոս Բուզանդը՝ գրելով. «Պարսկաստանն ու Բյուզանդիան... հարմար համարեցին՝ նախ հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մեջ... Նրանք ասում էին. «մեր երկուսիս միջև ընկած է այս հզոր ու հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով թուլացնենք ու խանդարենք այս թագավորությունը... հետո կաշխատենք նրանց

էլ կրճատել, աղքատացնել և մեր ծառայությունը ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանա գլուխ բարձրացնել»:

Պատմական, հասարակական, քաղաքական այս պայմաններն էին ահա, որ մեծ թափով առաջ էին քաշում հայ ժողովրդի տարբեր շերտերի, հակընթաց ուժերի համախմբման, միասնության անհրաժեշտությունը, որն այնքան կարևոր էր թե՛ երկրի ներքին զարգացման և թե՛ արտաքին թշնամական ուժերին դիմադրելու համար:

V դարի հայ առաջադեմ ուժերը եռանդալից միջոցներ էին որոնում՝ երկիրը այս ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար:

Ժամանակի իրականության ճշմարտացի պատկերը տրված է V դարի մեր իմաստնագույն պատմիչ Մովսես Խորենացու կողմից.

«Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք. արհավիրք՝ հեթանոսների կողմից և կռիվ՝ հերձվածողների կողմից և չկա այն խորհրդականը, որ խրատեր, պատերազմի պատրաստեր... ավաղ այս պատմությունը...»

Եկեղեցու ուսուցիչները տխմար ու ինքնահավան... փողով ընտրված, ոսկեսեր, նախանձոտ և գայլ դարձած՝ գիշատում են իրենց հոտերը...

Իշխաններն ապստամբ, գողերին ղողակից, կաշառակեր, աղահ, հափըշտակող, աշխարհ ավերող...

Առնվում են ամրոցներ, քանդվում քաղաքներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ...

Անթիվ նեղություն են կրում ռամիկները»:

Այս ամենը կատարվում էր ոչ միայն V, այլև IV դարի Հայաստանում, որը իր գեղարվեստական արտացոլումն է գտել Փավստոս Բուզանդի գրի առած ու մշակած ժողովրդական զրուցապատումներում:

Ներքին ու արտաքին այս արհավիրքներից տուժում էին հասարակության բոլոր շերտերը. հայտնի անձանցից, ազնվականներից մինչև ռամիկները: Ահա ինչու ժամանակի առաջավոր և հեռատես մտածողները առաջ էին քաշում մարդասիրության, խաղաղության, արդարության, ինչպես նաև ժողովրդի մշակույթի պահպանության, գույքի և պետության պաշտպանության պահանջները: Միայն քրիստոնեության գաղափարները պաշտպանելու ձգտումը չէր, որ մտահոգում էր նրանց: Արտաքին նվաճողների հափշտակությունները, հարստահարումը, հարկահանությունը ծանր բեռ էին հայ ժողովրդի մեծամասնության համար:

Փավստոս Բուզանդը նշում է, որ Հայաստան մուտք էին գործում մի կողմից պարսկերենը, մյուս կողմից հունարենը: Պարսիկներն աշխատում էին տարածել մագդեական կրոնը, իսկ հունական ու ասորական լեզուներով քարոզվող քրիստոնեությունը անհասկանալի էր ժողովրդի համար: Նա գրում է.

«Եթե ուսուցիչները (խոսքը օտար քարոզիչների մասին է—Վ. Հ.) դիշիր-ցերեկ, ամպերի նման՝ ուսումը ինչպես հորդ անձրև հոսեցնեին նրանց վրա, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէր կարող մտքում պահել կամ հասկանալ»:

Հունական և ասորական գրերը և այդ լեզուներով գրված գրքերը հայերին կտրում էին գիտությունից, հավատից, քաղաքական կյանքից, սահմանափակում էին ինֆորմացիայի փոխանակությունը, որն անհրաժեշտ էր հասարակության զարգացման համար:

Ասորական ու հունական գրերը կարող էին միայն արգելակող դեր խաղալ մշակույթի և պետականության ինքնուրույնության պահպանման գործում:

Հայտնի է, որ այդ շրջանում պարսից արքունիքը՝ իր նվաճողական քաղաքականությունը իրականացնելու և Հայաստանի ներքին գործերին միջամբնելու նպատակով օժանդակում էր ասորի քրիստոնյաներին՝ Հայաստանում դեկալար դեր ստանալու: Եվ հայ առաջավոր մտավորականները, բնականորեն, պայքարելով պարսիկների դրածո ասորիների դեմ, պետք է մերժեին նաև նրանց գրերը:

Նույնպիսի անհանդուրժող վերաբերմունք ունեին հայկական ինքնուրույնության կողմնակիցները նաև բյուզանդական կայսրության նկատմամբ, որը քրիստոնեությունը միջոց էր դարձրել ոչ միայն իր երկրում շահագործումն ուժեղացնելու, այլև այդ անվան տակ իր նվաճողական ներծուլողական քաղաքականությունը ծավալելու համար: Այդ նպատակն էր, որ իրականացրեց Բյուզանդիան նվաճելով Փոքր Հայքը, ուր դեռ IV դարից սկսած ծավալվել էին աղանդավորական շարժումները բյուզանդական տիրապետության դեմ:

Այս ամենը անընդունելի էր դարձնում նաև հունական գրերի օգտագործումը Հայաստանում:

Ուստի V դարի հասարակական առաջավոր գործիչների համար կարևոր էր ոչ միայն քրիստոնեության գաղափարների տարածումը, պայքարը հեթանոսների և աղանդավորների դեմ, այլև երկրի կենսունակ ուժերի կազմակերպումը, ժողովրդի մեջ փոխադարձ ըմբռնման ու կապի ամրապնդումը:

Նման պայմաններում մեծ գեր ունեին կատարելու հայոց լեզուն և հայ գրերը:

V դարի բարդ պայմաններում հայ ժողովրդին միավորելու և նրա պատմական խնդիրները կատարելու համար հրամայական պահանջ էր դա:

Հայ ժողովրդին համախմբելու, նրա ինքնությունը պաշտպանելու համար հայերեն գրերի ստեղծումը օրյեկտիվորեն դառնալու էր հզոր մի ազդակ:

Հայոց լեզվի հնչյունները, որոնց քանակը հասնում էր 36-ի, անհնարին էր կողացնել արամեական, հունական կամ այլ գրերով, քանի որ վերջիններս ունեին ընդամենը 22—26 նշանագրեր: Բազմաթիվ հնչյունների բացակայությունը պետք է ոչ լրիվ ու ոչ ճիշտ արտացոլեր մեր լեզվի հնչյունակարգը, աղավաղված պետք է գրի առնվեին նրա բառերը, անհասկանալի պիտի դառնային սրանց իմաստները: Այդ է պատճառը, թերևս, որ խորենացու նշած «վաղընջուց գտեալ» գրերը ժամանակին անկենսունակ եղան ու մոռացվեցին:

Ահհրաժեշտ էր հայ լեզվի հնչյուններին համապատասխանող նոր այբուբեն, որը ճշտորեն գրի առներ կենդանի հայ խոսքը:

Ահա թե ինչու հայ առաջավոր միտքը բարձրացրեց սեփական նշանագրեր ստեղծելու հարցը: Դրանով շահագրգռված էին և՛ հայոց թագավոր Վուսթապուհը, և՛ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը, և՛ քաղաքացիները, և՛ գյուղացիները:

Պատմական այդ մեծ խնդիրը իրականացրեց Տարոն գավառի Հացեկաց գյուղի բնակիչ՝ Վարդանի որդի Մեսրոպ Մաշտոցը: Հանճարեղ մի մարդ էր նա, որ գյուղից ելնելով հասել էր մինչև արքունի ատենադպրի պաշտոնին, ձեռք էր բերել ժամանակի բարձրագույն կրթությունը, տիրապետել զորականի հրմտությանը: Նրան ծանոթ էին երկրի ու ժողովրդի ծանր վիճակը, հայկական պետության վերացման վտանգը:

Մեսրոպը զենքը ձեռքին պայքարել էր հեթանոսությունից մնացած սնահավատություններ տարածողների դեմ:

Վռամշապուհ արքայից նա տեղեկացավ, որ Ասորիքում գոյություն ունեն հին հայկական գրեր. բերել տվին այդ գրերը. նրանցով Մեսրոպը փորձեց սովորեցնել իր հիմնած դպրոցների աշակերտներին: Բայց համոզվեց, որ այդ գրերը անբավարար էին:

Դրանք հավանորեն հեթանոսական շրջանի հայկական գրերն էին, որ ոչընչացվել էին քրիստոնեության տարածման ընթացքում:

«Հասկացան,—գրում է Մեսրոպի աշակերտ և կենսագիր Կորյունը,—որ այդ (հին) նշանագրերը բավական չեն հայերենի սիղոբաները-կապերը ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված ու հարություն առած հանդիպեցին»:

Մեսրոպ Մաշտոցը, որ տիրապետում էր ասորական, հունական, պարսկական լեզուներին ու գրականությանը, Սահակի և Վռամշապուհի հանձնարարությամբ, իր աշակերտների հետ մեկնեց Նդեսիա և Ամիդ քաղաքները: Աշակերտների մի մասին ուսման ու կատարելագործման թողեց այդտեղ, իսկ մյուսներին ուղարկեց Սամոսատ քաղաքը՝ հունական դպրության մեջ կատարելագործվելու: Ապա ինքը սկսեց ուսումնասիրել ժամանակակից և հին բազմաթիվ այբուբեններ, գիտականորեն ճշտեց հայերենի հնչյունակարգը, օգտագործելով տարբեր լեզուների այբուբենները, ստեղծեց մեսրոպյան նոր այբուբենը:

Բերելով Վաղարշապատ իր նոր այբուբենը, Մեսրոպն իր աշակերտների միջոցով սկիզբ դրեց քաղցմանական և ինֆնուռույն գրականության: Նա բացեց դպրոցներ թե՛ Վաղարշապատում, թե՛ Հայաստանի այլ շրջաններում, պատրաստեց աշակերտների և դաստիարակների նոր ու նոր խմբեր՝ իր առաջադրած հասարակական, քաղաքական, մշակութային խնդիրներն իրականացնելու համար:

Գիտական, ստեղծագործական այս եռանդուն աշխատանքը տեղի էր ունենում IV դարի վերջին և V դարի սկզբին, երբ Հայաստանն արդեն բաժանված էր Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև—թեև Պարսկաստանին ենթակա բաժնում դեռևս շարունակվում էր իր գոյությունը Արշակունյաց տունը:

Հայկական գրերը ստեղծվեցին 404—406 թթ., տագնապալի պայմաններում. նրանց ստեղծումից 20—22 տարի հետո վերացավ նաև Արշակունյաց վերջին թագավորությունը:

Ամբողջ V դարը Հայաստանում անցնում էր օտար տիրապետողների դեմ մղված ժողովրդական ապստամբությունների և ռազմական դիմադրության պայմաններում:

Նույն այդ դարում և նույն այդ ապստամբություններին զուգահեռ Հայաստանում բուռն թափով ծավալվեց ու զարգացավ մեսրոպյան նորաստեղծ գրերով գրականությունն ու գիտությունը: Գիրք դառնում էր ժողովրդի կազմակերպման, ուսման ու դաստիարակության հզոր միջոց:

Հանդիսանալով հայերենի հնչյունների կողացման լավագույն միջոցը, լինելով պարզ, դյուրիմաստ, դյուրագիր, դյուրաճանաչելի և իրարից դյուրտարբերելի՝ մեսրոպյան այբուբենը արագորեն տարածվեց հայոց աշխարհում:

Այն մեծագույն հնարավորություններ ստեղծեց նաև թարգմանչական աշխատանքների համար:

Գիտակցաբար զրվում էր և գործնականորեն լուծվում էր մի կարևոր խնդիր՝ հայ ժողովրդին մոտիկից ծանոթացնել մյուս ժողովուրդների մշակույթին: Որքա՞ն դա հիշեցնում է այսօրվա խնդիրները, որոնք ամենաառաջավոր պետությունների կողմից լուծվում են ինֆորմացիայի հսկայական ինստիտուտների և կենտրոնների ստեղծման միջոցով:

Հայերեն թարգմանվեցին հույն և ասորական փիլիսոփայական և այլ տիպի աշխատություններ—այդ թվում այնպիսի երկեր, որոնց բնագրերը կորել են և գոյություն չունեն ոչ մի լեզվով, բացի հին հայերեն թարգմանություններից:

Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Աստվածաշնչի թարգմանությունը, որ իրականացրեց Մաշտոցը՝ իր աշակերտների և Սահակ Պարթևի հետ միասին՝ առաջին հերթին անձամբ թարգմանելով Սողոմոնի Առական գիրքը և այլ հատվածներ: Հետաքրքիր է, որ Աստվածաշնչի թարգմանությունը ևս հետապնդում էր ոչ միայն կրոնական, այլև քաղաքական նպատակներ, մանավանդ Հին Կտակարանը, որ պարունակում էր երբայական ժողովրդի ազատագրական պայքարի էջերը, նրա բանահյուսությունը՝ սիրո, հայրենասիրության և մարդկային այլ զգացմունքների մասին: Այս ամենը համահնչուն էին իր ազատության և ինքնուրույնության համար պայքարող հայ ժողովրդի ոգուն:

Մեսրոպյան գրերի կիրառման շնորհիվ պատմության էջերում արձանագրվեց այն խոշոր, կարևոր է ասել, հեղափոխիչ նշանակություն ունեցող մտավոր հեղաշրջումը, որ տեղի ունեցավ հայ մշակույթի բնագավառում V դարում:

Աննախընթաց զարգացման ու գիտական բարձր մակարդակի հասավ պատմագրությունը, որի նպատակն էր մի կողմից՝ վեր հանել հայ ժողովրդի անցյալի հերոսական դրվագները, մշակութային արժեքները, մյուս կողմից՝ օգտագործել այդ ավանդները ժողովրդին նոր պայքարի, նոր գաղափարախոսության ոգով զաստիարակելու համար:

Հայ ժողովրդի անցյալը լուսաբանելուն և պատկերելուն են նվիրված Ագաթանգեղոսի, Փավստոս Բուշանդի և հատկապես Մովսես Խորենացու պատմական երկերը. նրանց մեջ անցյալի ուսումնասիրության հետ միասին ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում նաև հայ ժողովրդական ստեղծագործության հնագույն նմուշները, ինչպես և՛ հարևան ժողովուրդների պատմության կարևոր դրվագները:

Պատմագրության մի երկրորդ ճյուղը, հանձին Եղիշեի «Վարդանանց պատմության», Ղազար Փարպեցու «Հայոց պատմության», արտացոլում էր ժամանակակից գաղափարական պայքարն ու քաղաքական անցքերը, ոգեկոչում ժողովրդին հայրենի երկրի և մշակույթի պաշտպանության վեհ նպատակներին:

Հայ պատմագրությունը, և հատկապես Խորենացու անմահ երկը, իր նշանակությամբ վաղուց դուրս է եկել հայկական շրջանակներից և այսօր իսկ համաշխարհային արժեք է ներկայացնում, քանի որ կարևոր նյութեր է պարունակում ոչ միայն հայ, այլև ուրիշ ժողովուրդների պատմությունն ուսումնասիրելու համար:

Պատմագրության հետ միասին V և VI դարերում մեզանում զարգանում է նաև փիլիսոփայությունը, առավել Դավիթ Անհաղթի ու Պարույր Հայկազնի նման դեմքեր:

Մեսրոպյան գրերն են, որ հիմք են դառնում նաև հայկական թվանշանների համառ և V—VII դարերում որպես քանակական ինֆորմացիայի փոխա-

նակման հարմար միջոց զարգանում է համարողական արվեստը: Մեսրոպյան տառերով գրված Շիրակացու թվարանական աշխատությունը համարվում է թվաբանության ամենահին ձևոնարկը: Հետագայում Հայաստանում խարզմանվում է նաև էվկլիդեսի երկրաչափությունը:

V—VII դարերում հայկական գիտությունը իր ներկայացուցիչներն ունեցավ նաև տիեզերագիտության, աշխարհագրության, տոմարագիտության և այլ ասպարեզներում, որոնք իրենց աշխատությունները ստեղծում էին մեսրոպյան գրերով:

Պատմությունը պահել է վաղ միջնադարի հայ բժիշկների անունները, որոնց ավանդները շարունակելով Մխիթար Հերացին XII դարում ստեղծեց իր հոյակապ «Ջերմանց մխիթարությունը», իսկ XV դարում Ամիր Դովլաթը գրեց բժշկության վերաբերյալ իր ծավալուն և բազմակողմանի երկերը՝ դարձյալ մեսրոպյան նշանագրերով:

Մեսրոպ Մաշտոցի, նրա գործակիցների և աշակերտների ջանքերով բարձր կատարելության հասան ղեկարվեստական գրականությունն ու չափածո խոսքը. հոգևոր ու աշխարհիկ երգերի մի շարք տեսակները: Դրան զուգահեռ՝ կատարելագործվեց հայ ժողովրդական երաժշտությունը և մտավ եկեղեցական արարողությունների մեջ. զարգացավ նաև առողջանական արվեստը, դրա համար մեսրոպյան նշանագրերի վրա գրվեցին առողջանական ու երգեցողական հատուկ նշաններ, որոնց կիրառումը վերագրվում է Մեսրոպի գործակից Սահակ Պարթևին: Ուշագրավ են հայկական հին ձեռագրերում պահված այդ նշանները, որ ինքնատիպ են ու չեն նմանվում մյուս ժողովուրդների առողջանական նշաններին: Վերջիններիս հիման վրա հետագայում զարգացան հայկական նոտաները, որոնք խազելու անունն են կրում:

Կարևոր նշանակություն ունեցան նաև արվեստագիտության, քերականության վերաբերյալ ինքնուրույն ու թարգմանական աշխատությունները, որ պատմության սեփականությունը դարձան մեսրոպյան գրերով. դրանցից են Մովսես Խորենացուն վերագրվող «Գեորգ պիտոյից» աշխատությունը և խարզմանական այլ երկեր:

Հատկապես պետք է նշել հոետորական արվեստի տաղաչափական ուսմունքի վերաբերյալ աշխատությունները, այդ թվում Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանությունը՝ մեր Գավրիլ Անհաղթի հմուտ և մանրամասն մեկնաբանությամբ: Այստեղ մենք տեսնում ենք առողջանական և տաղաչափական նշանների հաշիւներն անունները (մեծաստը, մեծավերջ, ստեղն, քողաղոտ, քողաբորբ և այլն), որոնք մյուս բոլոր լեզուներում պահպանվել են հունական տերմիններով (քորեյ, յամբ...):

Հայկական հնագույն տաղաչափությունը կիրառված է դեռ մեհենական շրջանից մեզ հասած հուլակավոր «Վահագնի ծնունդի» մեջ:

Թուրքովին նոր մի դարաշրջան նշանավորող անպարփակ, բազմակողմանի և խորն է Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերի դերն ու նշանակությունը՝ V դարի և հայ ժողովրդի ողջ մշակույթի համար: Այդ գրերի միջոցով ամփոփվեց նախամեսրոպյան մեր դարավոր մշակույթի զարգացումը և դարձավ հետագա դարերի սեփականությունը: Մաշտոցյան նշանագրերով մշակվեցին նաև նոր ավանդներ՝ հայ հասարակական կյանքի գալիք հարատևման ու պալքարի համար:

Հայ ժողովուրդը կկորցնէր իր ազգային ինքնությունը, իր լեզուն, իր մշակույթը, կտարրալուծվէր ուրիշ ազգերի մեջ, ինչպես այդ պատահեց Հին Արեւելքի մի քանի ժողովուրդների հետ, եթէ չլինէին մեսրոպյան գրերը:

1600 տարիների ընթացքում քիչ անգամ չէ, որ Հայաստանը, նրա բնիկ ժողովուրդը ենթարկվել է զանազան բարբարոս ցեղերի և օտար նվաճողների արշավանքներին, սակայն, այդուհանդերձ, հայ ժողովուրդը պահպանել է իր ազգային ինքնությունությունը, ամենադժան պայմաններում շարունակել է իր ստեղծագործական աշխատանքը:

Մեսրոպ Մաշտոցի մեծ գյուտից հետո, հայերեն լեզվով ինֆորմացիայի հաղորդման և մասնավորապես վերջինիս տարածման տեխնիկայի զարգացման գործում կարեւորագույն քայլ հանդիսացավ հայկական տպագրության հիմնումը: Առաջին հայերեն գիրքը՝ «Պարզատումար» խորագրով, լույս է տեսել 1512 թ. Վենետիկում, և մենք այսօր Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հետ միասին նշում ենք նաև հայ տպագրության 450-ամյակը:

Այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում, և այն էլ օտար հողի վրա, կարողացել է չորսուկես դար սրանից առաջ ստեղծել սեփական լեզվով տպագրություն, շատ ավելի վաղ, քան բաղմամբով ուրիշ կուլտուրական ազգեր, խոսում է այն մասին, թե որքան մեծ է եղել այդ ժամանակ մեզանում ինֆորմացիայի և մշակութային արժեքների տարածման անհրաժեշտությունը:

Հասկանալի է, թե ինչպիսի հսկայական նշանակություն պետք է ունենար տպագրության սկիզբը մի ժողովրդի համար, որը այդ ժամանակ զրկված էր պետականությունից և որի ղեկավար մասը ցրված էր հեռավոր գաղութներում: Չնայած այն փաստին, որ աշխատավորության ճնշող մեծամասնությունը դրանից հետո էլ շարունակում էր մնալ անգրագետ, այնուամենայնիվ տպագիր գրքերի առկայությունը զգալիորեն ավելացրեց գրագետների թիվը հայերի մեջ: Առաջ եկավ և գնալով խորացավ ժողովրդի ձգտումը դեպի կրթությունը, դեպի դպրոցը:

Հաջորդ քայլը հանդիսացավ մեսրոպյան տառերով հայ տպագիր քարտեզագրության ստեղծումը Վանանդեցիների կողմից, որոնք Ամստերդամում 1699 թ. տպագրեցին աշխարհի կիսագնդերի քարտեզը: Հանդիսանալով առևտրի համար կարեւորագույն աշխարհագրական ինֆորմացիայի կողացման մի նոր ձև, մեր քարտեզագրությունը իր հիմնադրումից մինչև այժմ օգտագործում է մեսրոպյան տառերը:

1771 թ. հիմնադրվում է առաջին տպարանը բուն Հայաստանի հողի վրա՝ Էջմիածնում, իսկ 1828 թ. մեր հայրենիքի մի մասի միացումը Ռուսաստանին, իր հետ բերում է գրի, գրականության և տպագրական գործի զարգացման համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ:

Սակայն հայ գրերը, իդեալականորեն համապատասխանելով հայոց լեզվի հնչյունային կազմին, չէին կարող լայնորեն ծառայել ժողովրդին, քանի որ գրականությունը շարունակում էր օգտագործել աշխատավորության լայն շահվածներին անհասկանալի դարձած գրաբարը:

Միայն հաշատուր Աբովյանի և մեր մյուս լուսավորիչների ջանքերով հայերեն գրավոր խոսքի մեջ կատարվեց այն մեծ հեղաշրջումը, որը վերստին մոտեցրեց գրական լեզուն ժողովրդին և լայնացրեց մեսրոպյան տառերի կիրառման ոլորտը ամենօրյա կյանքում:

Սեյ Ինչ Երկունքով է ծնվել աշխարհարարը որպես գրական լեզու, ցայտուն կերպով նկարագրված է «Վերք Հայաստանի» վեպի առաջին խոսքի Լեյնում:

Հետագայում ես հայ գրողների կողմից լուրջ քայլեր կատարվեցին գրական լեզուն ժողովրդի լայն խավերին առավել մոտեցնելու ուղղությամբ: Այս առնչությամբ բավական է հիշել Հովհաննես Թումանյանի անունը, որի բնած լեզվական ուղին բոլոր ամենայնի հասկանալի ու հարազատ լինելով մեր ժողովրդական լայն զանգվածներին, մեծապես նպաստեց հայ գրական խոսքի հետագա զարգացմանը:

Մովետական կարգերի հաստատումով Հայաստանում տեղի ունեցավ հայ գրի և գրականության անկասկածելի վերելք, որի մասին անցյալում կարող էին միայն երազել մեր առաջավոր մարդիկ: Բնական վերացվեց անգրագիտությունը: Մեսրոպյան գրին ու գրքին ծանոթացան Սովետական Հայաստանի բոլոր քաղաքացիները: Պարտադիր դարձավ յոթնամյա կրթությունը, երկիրը ծածկվեց դպրոցների խիտ ցանցով: Երազարանների թվով Հայաստանը առաջ անցավ շատ և շատ եվրոպական երկրներից: Այժմ մեր ուսուցիչական զորքում են 1200-ից ավելի դպրոցներ, որոնցից շուրջ 400-ը լրիվ միջնակարգ կրթություն են տալիս իրենց սաներին: Կազմակերպվեցին Համալսարանը և բազմաթիվ բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Մեզանում տարեկան լույս են տեսնում հազարից ավելի անուն գիրք, 7 միլիոնից ավելի տպագրանակով: Թերթերը տարածվում են մոտ 400.000 օրինակով: Հիշենք նաև, որ մեր մյուս եզրայրական հանրապետություններում նույնպես գոյություն ունեն հայկական դպրոցներ, տպագրվում են մեսրոպատառ գրքեր, ամսագրեր և լրագրեր:

Հայերենը դարձել է պետական լեզու. նրանով են կազմվում Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական փաստաթղթերն ու օրենքները. մեսրոպյան տառերով է կատարվում պետական հիմնարկների պաշտոնական գրագրությունը: Մեսրոպյան տառերով են գրված Հոկտեմբերյան Հեղափոխության բոցաշունչ երգչի՝ Եղիշե Չարենցի և սովետահայ մյուս լավագույն հեղինակներ/ձերկերը:

Հայոց լեզուն և մեսրոպյան տառերը այսօր կապում են մեզ հետ Սփյուռքի հայությունը, որը դժվար պայմաններում մաքառում է ներծովման վտանգի գեմ, սպասելով այն բաղձալի օրվան, երբ կհավաքվի իր հայրենի կտորի տակ:

Հայոց լեզուն և մեսրոպյան տառերը սովետական կարգերի օրոք դարձան միմեանակալից գիտության, գիտական ինֆորմացիայի հաղորդման ու տարածման կարևոր միջոց: Շնորհիվ իր ճկունությանն ու հարստությանը մեր լեզուն հեշտությամբ արտահայտում է գիտական նորագույն, նուրբ և բարդ գաղափարները և հասկացությունները: Մեսրոպյան տառերն են օգտագործվում մեր համասարանական և այլ բարձրագույն դպրոցական դասընթացներում ու դասադրքերում: Այդ տառերով են գրվում հիստությունների ակադեմիայի գիտական աշխատությունները: Այդ տառերով կանոնավոր լույս են տեսնում Հայաստանում գիտական շատ ամսագրեր:

Մեր պատմության սովետական դարաշրջանը դարձավ հայ մշակույթի բնահանուր վերածնության և վերելքի դարաշրջան:

Հսկայական թափ ստացավ թարգմանչական գործը: Հայերեն լեզվով թարգմանվել և բազմիցս տպագրվել են Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները: Թարգմանվել ու հրատարակվել են ռուս և արտասահմանյան դասական Եղիշակների և Եղբայրական ժողովուրդների գրողների բազմաթիվ երկեր: Թարգմանվել են շատ գիտական մենագրություններ և համալսարանական դասընթացներ ու ձեռնարկներ: Մեր թարգմանիչները թարգմանում են ռուսերենից, վրացերենից, ադրբեջաներենից, արաբերենից, լեհերենից, ֆրանսերենից, անգլերենից, չինարենից և բազմաթիվ այլ լեզուներից:

Անուրանալի է թարգմանչական գործի մեծ կարևորությունը. ժամանակի ընթացքում այն էլ ավելի պետք է լայնանա, ընդգրկելով մշակույթի և գիտության բազմաթիվ նոր ճյուղեր:

Ահա թե ինչու մեր գիտնականներն այսօր մտահոգված են հայերեն մեքենայական թարգմանություններ կատարելու խնդրով:

Այդ գործը պետք է գիտել որպես մեր գիտնականների պատվի խնդիր:

Այն հանգամանքը, որ առհասարակ այդպիսի խնդիր է գործնականորեն գրվել, ցույց է տալիս մեսրոպյան տառերի բացառիկ կենսունակությունը, նրանց պիտանիությունը մարդկային առաջադիմության ներկա բարձր փուլում:

Նթե անցյալում մեսրոպյան տառերը ծառայել են հայ ժողովրդի միասնության, նրա գոյության պահպանման, նրա մշակույթի ինքնուրույն զարգացման գործին, ապա այսօր, երբ մեր ժողովուրդը ապահով ու հանգիստ ապրում է սովետական աղգերի Եղբայրական ընտանիքում, մեսրոպյան տառերը ծառայում են կոմունիզմի դադափարների իրապոբժման, ժողովուրդների հետապա մերձեցման և ամբողջ աշխարհի խաղաղության ու առաջադիմության մեծ գործին:

Հավերժ փառք Մեսրոպ Մաշտոցին:

Թո՛ղ նրա հանճարեղ գյուտը այսուհետև էլ շարունակի ծառայել սովետական ժողովրդի վեհ նպատակներին:

Սույն գեկուցումը կազմելիս ռգավել եմ մեր բանասերների խորհուրդներից և օժանդակությունից: Հայտնում եմ իմ շնորհակալությունը առանձնապես ընկ. ընկ. Գ. Աբովին, Վ. Նալբանդյանին, Ա. Անտալյանին և Գ. Սեակին, որոնք իրենց նուրը գիտողություններով պարզ դարձրին ինձ համար մի բանի կարևոր հարցեր: